**Արձանագրություն N 2.1**

**«ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան — 15 մարտի 2018թ. ժ. 14:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Հովհաննիսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Դ. Ավետիսյան, Ա. Մարտիրոսյան, Ա. Նազարյան, Ա. Իսրայելյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Լ.Մանուչարյան

**Գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի հայտերի բացման մասին**

1. Ընդունել ի գիտություն, որ ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| հ/հ | Անվանումը | Հասցե |
|---|---|---|
| 1 | Թորդադ ՍՊԸ | Ք. Երևան, Լեռ Կամսարի 30/2, բն. 57 |
| 2 | Աբակ ՍՊԸ | Սիլիկյան թաղամաս, 1 փ., 20 տ |
| 3 | Մոնտաժտրանսշին ՍՊԸ | Ք. Երևան, Շիրակի 74/2 |
| 4 | Մեծ Հիմք Ա/Կ | Ք. Երևան,Կարապետյան փ. 9 |
| 5 | Մարտշին ՍՊԸ | Ք. Երևան, Նորքի 2-րդ նրբանցք, 17 |
| 6 | Սասունասար ՍՊԸ | Ք. Երևան, ազատության նրբամցք,-րդ շենք, թիվ 75 բնակարան |
| 7 | Հեր-Մուշ շին ՍՊԸ | Ք. Գավառ, Ազատության 54 |
| 8 | Էներգո Սվյազ Պրոմ Ստրոյ ՍՊԸ | Կոտայքի մարզ, ք. Աբովյան 2 Մ/Շ 29-1 |

| | | |
|---|---|---|
| 9 | Արթ-Կարշին ՍՊԸ | Ք. Երևան, Հ. Քոչարի փ. 16/1, 26 |
| 10 | Դը Բեստ Շին ՍՊԸ | Արարատի մարզ, գ. Գոռավան, Վ. Ս 49 |
| 11 | Վահրադյան Շին ՍՊԸ | Ք. Ստեփանավան, Չարենցի 175 |
| 12 | Էդիտա Ա/Կ | Գեղարքունիքի մարզ, գ. Գեղամավան, 2-րդ փողոց, 3-րդ նրբանցք, 25 տուն |
| 13 | Արգոհիշին ՍՊԸ | Ք. Երևան,Վարդանանց 8 |
| 14 | ԱՆՆԱՐ ՍՊԸ | Ք. Հրազդան, Տիգրան Մեծի 32 |
| 15 | Ակոռ-Շին ՍՊԸ | Ք. Մասիս, 8-րդ փողոց, 65 տուն |
| 16 | Գազկոմշին ՍՊԸ | Ք. Երևան, Նոր Նորքի 9-րդ զ-ծ 20/53 |
| 17 | Բիդեք ՍՊԸ | Ք. Երևան, Նեկրասովի 86 |

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

2. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա առաջին տեղ էր զբաղեցրել «Թորդադ» ՍՊԸ-ն: Էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացվել «Թորդադ» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ, ինչպես նաև հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ: Կոմիտեից ստացված հարցման մասին տեղեկատվությամբ պարզվել է, որ տվյալ մասնակիցն ունի հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, (1735745 ՀՀ դրամի չափով) ինչպես նաև հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է ներկայացված գնային առաջարկից, և կազմում է 1715780 ՀՀ դրամ, այնինչ «Թորդադ» ՍՊԸ-ն ներկայացրել է 8870904 ՀՀ դրամի գնային առաջարկ:

Հանձնաժողովի քարտուղարը կոմիտեից ստացված հարցման մասին տեղեկատվության ստացման օրը ծանուցել է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Մասնակիցը չի շտկել անհամապատասխանությունը:

Գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «Թորդադ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ «Աբակ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Հանձնաժողովի՝

Նախագահ՝ ______________ Հ.Հովհաննիսյան

Անդամներ՝ ______________ Դ. Ավետիսյան

______________ Ա.Մարտիրոսյան

______________ Ա. Նազարյան

______________ Ա. Իսրայելյան

Քարտուղար՝ ______________ Լ.Մանուչարյան